ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2023 թվականի որոշումը կատարելու, բյուջեի վարչական մասի եկամուտների և բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացումը Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 28.12.2022թ. թիվ 166-Ն որոշմամբ հաստատված բյուջեի վարչական մասի եկամուտները ավելացնել.

1.1. Գույքահարկ փոխադրամիջոցների համար եկամուտը 1121 տողը 40000.0 հազ. դրամ,

1.2. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ եկամուտը 1352 տողը 20000.0 հազ. դրամ:

1.3. Ավելացնել բյուջեի վարչական մասի ծախսերը 60000.0 հազ. դրամ և ուղղել.

1.3.1. Փողոցների լուսավորման /բաժին 06, խումբ 4, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածը /հոդ. 4212/ 10000.0 հազ. դրամ;

1.3.2. Այլ մշակութային կազմակերպությունների /բաժին 08, խումբ 2, դաս 4/ <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածը /հոդ. 4239/ 20000.0 հազ. դրամ;

1.3.3. Հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 5000.0 հազ. դրամ:

1.3.4. Գրադարանների /բաժին 08, խումբ 2, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 2000.0 հազ. դրամ:

1.3.5. Թանգարաններ և ցուցասրահների /բաժին 08, խումբ 2, դաս 2/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 2000.0 հազ. դրամ:

1.3.6. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոնների /բաժին 08, խումբ 2, դաս 3/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 1000.0 հազ. դրամ:

1.3.7. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 10000.0 հազ. դրամ:

1.3.8. Արտադպրոցական դաստիարակության /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 10000.0 հազ. դրամ:

1.4. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 28.12.2022թ. թիվ 166-Ն որոշմամբ հաստատված բյուջեի ֆոնդային մասի եկամուտները.

2.1. Ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների <Հողի իրացումից մուտքեր> 6410 տողը 60000.0 հազ. դրամ:

2.2. Բյուջեի ֆոնդային մասի ծախսը ավելացնել 55000.0 հազ. դրամ և ուղղել ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 55000.0 հազ. դրամ:

2.3. Համայնքային զարգացման /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 5000.0 հազ. դրամ:

2.4. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 28.12.2022թ. թիվ 166-Ն որոշմամբ հաստատված բյուջեի ֆոնդային մասի եկամուտները.

3.1. Նվազեցնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների <Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)> 1261 տողը 129271.0 հազ. դրամ:

3.2. Բյուջեի ֆոնդային մասի ծախսը նվազեցնել 129271.0 հազ. դրամ և նվազեցումը կատարել նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 129271.0 հազ. դրամ: